Արձանագրություն N2

<< ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-17/3>> ծածկագրով գնանշման հարցման
գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 22 սեպտեմբերի 2017թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մխեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Հ. Խաչատրյան, Վ. Քեռյան, Ն. Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավագյան

1. Հայտերի ներկայացման վերաբերյալ

Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտվելու վայրը	Էլ. հասցե
1	«ԱՐԹ-ԿԱՐՇԻՆ» ՍՊԸ	ք.Երևան, Հ. Քոչարի փ., 16/1 26	777oseyan@mail.ru
2	«Արտ Պլաս» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Շահումյան, Պ. Սևակի 7	artplas@inbox.ru
3	«Աբակ» ՍՊԸ	ք. Երևան, Սիլիկյան թաղ. 1 փող., 20 տուն	abak500@yandex.ru
4	«Բիդեք» ՍՊԸ	ք. Երևան,Նեկրասովի 86	bedeck.llc@mail.ru
5	«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	ք. Երևան, Ազատության նրբ., 4 շ., 75 բն.	stepanyan-andranik@rambler.ru
6	«Էլշին» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Սիսավան, Գետափի փ. 8	elshin-1@mail.ru
7	«Վահրադյան Շին» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Չարենցի 175	vahradyanshin@yandex.ru
8	«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Պ. Սևակի 1/51	namenased@mail.ru
9	«Այպոշին» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52	ajposhin@mail.ru

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

2. Գնային առաջարկների ներկայացման վերաբերյալ

Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկը:

Չափաբաչնի համարը	Անվանում	Մասնակիցներ	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/		Նախահաշիվ ՀՀ դրամ
			Գնի առաջարկը առանց ԱԱՀ	ԱԱՀ	
1	*Ջեռուցման համակարգի ընթացիկ նորոգման աշխատանք ներ*	«ԱՐԹ-ԿԱՐՇԻՆ» ՍՊԸ	11250000	2250000	21524392
		«Արտ Պլաս» ՍՊԸ	13400000	2680000	
		«Աբակ» ՍՊԸ	14540000	2908000	
		«Բիդեք» ՍՊԸ	14843710	2966942	
		«Էլշին» ՍՊԸ	15500000	0	
		«Վահրադյան Շին» ՍՊԸ	16000000	3200000	

		«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ	16528245	0	
		«Այպոշին» ՍՊԸ	17040150	3408030	

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

3. Մերժված հայտերի վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 40 կետի 4-րդ ենթակետի հանձնաժողովը որոշեց մերժել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը՝ (ներկայացված փաստաթղթերում բացակայում է գնային առաջարկը և տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագիրը, գնային առաջարկի փոխարեն armeps.am համակարգ էր ներբեռնված Հավելված 1-ը):

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

4. Նիստը կասեցնելու վերաբերյալ

Հիրմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի՝

41-րդ կետի՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, քանի որ.

4.1 «Էլշին» ՍՊԸ–ն, որը մասնակցում է գնանշման հարցմանը «Գոռպլաստ» ՍՊԸ–ի հետ համատեղ կոնսորցիումով, իրենց կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում բացակայում էր հրավերի պահանջ հանդիսացող իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեները և հեռախոսահամարները, «Էլշին» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտի հավելված 9-ում (Տուժանքի մասին համաձայնագիր) և ներկայացված հավելված 2.1-ում առկա էին անհամապատասխանություններ Տիգրան Հովհաննիսյանի անձնագրային տվյալներում, եթե նշված տվյալները հավելված 2.1-ում սխալ են, խնդրում ենք ներկայացնել հավելված 2.1-ի շտկված տարբերակը, հակառակ դեպքում ներկայացնել պարզաբանում, հայտերում բացակայում էին հրավերի 4.3 կետի 6-րդ ենթակետով պահանջվող լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

4.2 «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում բացակայում էր հրավերի պահանջ հանդիսացող իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեները և հեռախոսահամարները:

4.3 «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում բացակայում էր հրավերի պահանջ հանդիսացող իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեները և հեռախոսահամարները:

4.4 «Աբակ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում բացակայում էր հրավերի պահանջ հանդիսացող իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեները և հեռախոսահամարները:

Նշված կազմակերպություններին հանձնաժողովը առաջարկել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել հանձնաժողովի քարտուղարի ars.avagyan@parliament.am էլեկտրոնային հասցեին մինչև ս.թ. սեպտեմբերի 26-ը ժամը 11:00-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

5. Տեղեկություններ հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

2017 թվականի սեպտեմբերի 26-ին մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ–ն և «Աբակ» ՍՊԸ-ն շտկել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել են նշված անհամապատասխանությունները, «Էլշին» ՍՊԸ–ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել էր անհամապատասխանությունները և ներկայացրել էր պարզաբանում հավելված 9-ում (Տուժանքի մասին համաձայնագիր) և ներկայացված հավելված 2.1-ում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ՝ հավելված 9-ում (Տուժանքի մասին համաձայնագիր) տեղի է ունեցել վրիպակ:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ը չէր շտկվել և չէր ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց մերժել «Էլշին» ՍՊԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐԹ-ԿԱՐՇԻՆ» ՍՊԸ-ին, որը մասնակցել է կոնսորցիումով «ԻՇԽԱՆՀԱՏԱԿ» ՍՊԸ-ի հետ որպես առավել ցածր գին ներկայացրած մասնակից:

Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արտ Պլաս» ՍՊԸ-ին և երրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Աբակ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

7. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հանձնաժողովը որոշեց առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին 3 աշխատանքային օրվա ընթացքում ընթացակարգի քարտուղարի **ars.avagyan@parliament.am** էլեկտրոնային փոստին ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Հաջորդ նիստ հրավիրելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել ս.թ. հոկտեմբերի 3-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Մխեյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Հ. Խաչատրյան

_____ Վ. Քեռյան

_____ Դ. Հարությունյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավագյան